

ԼԵՀԱՀԱՅՈՑ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՍԿԶԲԵՆԱԽՈՐՈՒՄԸ

ԸՍՏ ԼԵՀԱՀԱՅ ՊԱՏՄԱԲԱՆ

ՍԱԴՈԿ ԲԱՐՈՆՉԻ

(1814–1892)

Rys dziejow Ormianskich (Ուրուագծեր հայոց պատմութեան) գրքում Ս. Բարոնչը տալիս է Ռեչ Պոսպոլիտայի երբեմնի տիրոջներում ստեղծուած կամ ժԹ. դարակէսին Լվովի հայոց թեմակալի իշխանութեան տակ գտնուող հետեւեալ 37 հայկական գաղթավայրերի համառօտ պատմութիւնը՝ սկզբնաւորումից մինչեւ իր ապրած ժամանակը. Բար, Բալտա, Բարեկ (Դուբրովիցա), Բրոդի Բէրէժանի, Զէրնովցի, Դուբնօ, Հորոդենկի, Եարոսլաւ, Եազլովցեց, Կամենեց-Պոդոլսկ, Կազիմիր Դոլնի, Կիեւ, Կրակով, Կուտի, Լուբլին, Լվով, Լուցկ, Լիսեց, Մոհիլով (Մոգիլով-Պոդոլսկ), Օբերտրն, Օրմիանէ, Օրմիանկի, Պոդհայցէ, Ռաչքով, Սատանով, Սնեատին, Ստոլձենիցա, Ստանիսլաւ, Սուչաւա, Տըսմենից, Վարենժ, Վարչաւա, Զամոստիէ, Զոլոչով, Ժուլկուա, Ժուանեց: Այս 37 բնակավայրերից բացի պատմաբանը հայոց գաղթօջախների առկայութիւնը ընդունում է Վիլնիուսում եւ ընդհանրապէս Լիտուայում, ինչպէս նաեւ Ժուլկով, Ստրիյ (Լվովի մարզ) եւ Տորուն քաղաքներում, որոնց մասին խօսում է տողատակի ծանօթագրութիւններում:

Այսպիսով՝ Բարոնչը իր գրքում բերում է պատմական Լեհաստանի, Մոլդաւիայի եւ Լիտուայի տարածքներում սկզբնաւորուած 41 գաղթավայրերի վերաբերեալ տեղեկութիւններ: Յիշեալ 41 գաղթօջախների մեծ մասին անդրադառնում է շատ թուուցիկ՝ երբեմն մի քանի նախադասութեամբ: Հիմնականում

խօսում է Լվովի մասին (էջ 104-152), համեմատաբար մեծ տեղ է յատկացնում Կամենեց-Պոդոլսկին (էջ 92-98), Մոգիլե-Պոդոլսկին (էջ 156-163), Հորոդենկային (էջ 81-86), Եազլովցին (էջ 87-92), Բալտային (էջ 72-76), Ստանիսլաւին (էջ 167-171), Տըսմենիցին (էջ 172-175), Բերեժանիին (էջ 77-80), Չէրնովիցին (էջ 165-167) եւ Ջամոստիէն (էջ 176-178)։ Մնացած գաղթավայրերին անդրադառնում է շատ սեղմ՝ մէկ-մէկուկէս էջով, իսկ երբեմն՝ մի քանի նախադասութեամբ։

Բարոնչի կարծիքով ԺԱ. դ. Կիեւեան Ռուսիա մտած հայերը ԺԳ-ԺԴ. դարերում շարժուել են Պոդոլիա ու Գալիցիա՝ հետագայում համալրուելով Հայաստանից, Ղրիմից, Մոլդաւիայից ու այլ վայրերից եկած գաղթականներով։ Նա Ռեչ - Պոսպոլիտայի սահմաններում ծագած ամենավաղ գաղթավայրերը համարում է այժմ Կամենեց - Պոդոլսկի արուարձանները հանդիսացող Օրմիանէ եւ օրմիանկի Գիւղերը, Կամենեց - Պոդոլսկը, Լվովը, Լուցկը, մասամբ նաեւ Եազլովցը՝ թէեւ այս գաղթօջախի սկզբնաւորման հաւաստի փաստը համարում է տեղի հայերին շնորհուած Եան Ռաջիլիի 1615 թ. արտօնագիրը¹։ Սատանովը, Կրակովը եւ Բարը նա համարում է ԺԵ-ԺԶ. դարերի գաղթավայրեր, Պոդհայցէն, Տըսմենիցը, Ջամոչիէն՝ ԺԶ., Լուբլինը եւ Եարոսլաւը՝ ԺԶ-ԲԷ. դարերի գաղթօջախներ։ Գաղթավայրերի մեծ մասը Բարոնչի կարծիքով հիմնուել է ԺԷ. դարում (Ժուանեց, Ժուկուա, Վարչաւա, Վարենժ, Ջոլոչեւ, Ստուդենիցա, Ստանիսլաւ, Շնեատին, Լիսեց, Կազիմեժ-Դոլնի, Բերեժանի, Բարեկ)։ Մնացածների (Բալթա, Չէրնովցի, Դուբնո, Հորոդենկա, Ռաչքով, Կուտի, Մոգիլե-Պոդոլսկ, Օբերտըն, Ժուկով) ձեւաւորումը դնում է ԺԸ. դարը։

Ըստ Բարոնչի, ինչպէս ասուեց, Ռեչ-Պոսպոլիտա մտած ամենաառաջին հայ գաղթականների հանգրուանը Կամենեց-Պոդոլսկի մօտերքում գտնուած Օրմիանէ եւ Օրմիանկի գիւղերն են, որոնց կողքին 1062 թ. հիմնուեց Կամենեց-Պոդոլսկը։ Բարոնչի կարծիքով հայերն այս գիւղերը հիմնել են ԺԳ. դարում (Ռըս ջեյուվ, էջ 163)։ Մ. Բալինսկին եւ Տ. Լիպինսկին եւս այս գիւղերը ԺԳ. դ. հիմնուած գաղթավայրեր են համարում, որտեղից հայերը շարժուել են դէպի Լեհաստանի միւս բնակավայրերը։ Տ. Կրուսինսկին նշուած գաղթօջախներն աւելի հին է համարում՝ նշելով որ հայերն այստեղ են եկել 1062 թ. յետոյ։

1. S. BARACZ, *Rys dziejów ormiańskich* (այսուհետեւ՝ Ս. ԲԱՐՈՆՉ, Ռըս ջեյուվ օրմիանսկիսի), Tarnopol, 1869, էջ 89։

Կամենեց-Պոդոլսկի մասին խօսելիս Բարոնը նախ բերում է բանաւոր մի աւանդութիւն, ըստ որի 1250 թ. այստեղ հայոց եկեղեցի է եղել, ուր պահուել է Անիից բերուած Ղուկաս Մաղկողի Ս. Մարիամ Աստուածածնի պատկերը²: Բայց հայերի մոռտքն այստեղ ընդունում է Ժ. Դարը՝ վկայակոչելով տեղի եկեղեցում իր տեսած ձեռագիր մի ծիսարանի յիշատակարանը, որի նախավերջին՝ մագաղաթեայ էջում, գրուած է. «Ս. Նիկոլայ եկեղեցուն տրուած այս ծիսարանը... գրուած է հայոց թուականութեան 798 թ., իսկ Քրիստոսի թուարկութեան 1349 թ., Ղրիմի Սուրխաթ քաղաքում, Ստեփանոս քահանայի ձեռամբ: Գրուելուց 45 տարի յետոյ (1349 թ. Լ. Հ.) Կոտլեշյի որդի Սինանը գնեց այս ու նուիրեց յիշեալ Ս. Նիկոլայ եկեղեցուն՝ հայոց թուականութեան 847 եւ Քրիստոսի թուարկութեան 1398 թ. օգոստոսի 15ին: Այդ նոյն Սինանը սեփական ծախսով կանգնեց Ս. Նիկոլայի այս եկեղեցին՝ հայոց թուականութեան 847, իսկ Քրիստոսի թուականութեան 1394 թուին³: Յետագայ ուսումնասիրողներն ու արդէի պատմաբանները եւս Կամենեց-Պոդոլսկի Ս. Նիկոլայոսի եկեղեցու կառուցումը ղնում են 1398 թ.:

Կամենեց-Պոդոլսկի հայոց իրաւունքի մասին բարոնը նշում է, որ նրանք սեփական իրաւունքով շարժուելու արտօնութիւններ ունէին դեռեւս Պոդոլիայի իշխաններից ու Վլադիսլաւ Տագիրէլլոյից (Լիտուական Մեծ իշխան՝ 1377 թ.ից, լեհական թագաւոր՝ 1386-1434 թթ.), որը «վերահաստատեցին Վլադիսլաւ Վարնենչիկը եւ նրա տեղապահ, Կամենեցի Կաշտելան եւ ստարոստա Տան զ Չըժովա), 1443 թ.»։ Հայոց աղբիւրներից մեզ հասած տեղեկութեան համաձայն, Կամենեցի հայերը 1350 թ. «Սկսան ի ձեռն բրիվիլեկաց թագաւորացն լեհաց զդատարանս առնել. մինչեւ զի կարող եղեն զմահապարտս մեռուցանել, առանց հրամանի կամ թոյլտուութեան լեհաց»⁴: Ստ. Ագոնցը գրում է թէ Կամենեցի հայերը Կազիմիր մեծից արտօնագիր ստացան 1344 թ.⁵: Ըստ Բարոնի, Կամենեցի հայերի ինքնուրոյնութիւնը վերացաւ 1790 թ. Փետրուարի 3ից յետոյ, երբ քաղաքի բոլոր երեք իրաւաւորութիւնները (հայ-

2. S. BARACZ, *Cudowny obrazy Matki Najświętszej w Polsce*, էջ 103:

3. Ս. ԲԱՐՈՆՁ, Ռըս ջեյուվ օրմիամսկիիս, էջ 92:

4. ՍՏ. ՌՈՇՔԱՅ, Ժամամակագրութիւն կամ տարեգիրք տարեկամք եկեղեցակամք, հրատարակեց Հայր Յ. Ոսկեամ, Վենետիկ, 1864, էջ 149-150:

5. ՍՏ. ԱԳՈՆՅ, Աշխարհագրութիւն չորից մասամբ աշխարհի, մասն երկրորդ, հտ. Բ., Վենետիկ, 1802, էջ 94:

կական, լեհական եւ ուկրայինական) միացան մէկ ընդհանուր մէջ⁶:

Բնակչութեան թուի մասին պատմաբանը գրում է. «Ասում են 1566 թ. հայերն այստեղ 900 տուն ունէին եւ իրենց Գրիգոր վարդապետ անուն եպիսկոպոսը» (Ռըս ջեյուվ, էջ 94): Դիւանական փաստաթղթերից քաղած Մ. Ռոլլէի տուեալներով, Ժ. Ղարակէսին Կամենեցում 1200 ընտանիք հայ կար, որոնք ապրում էին 900 տների մէջ⁷: Ըստ Ալ. Պիդուի, 1600ական թթ. Կամենեցում հայոց չորս եկեղեցի կար, իսկ քաղաքից դուրս՝ եւս չորս կամ հինգ եկեղեցի, որոնցից միայն երկուսն էին հայերին, մնացածը անցել էր լատինացիներին, որովհետեւ հայերը լքել էին⁸: Ժ. Ղարակէսին Ստ. Ագոնցը Կամենիցի մասին գրում է, թէ լեհերը 40 գերդաստան էին, ռուսները՝ 150, իսկ հայերը աւելի քան 110 գերդաստան (նշ. աշխ., մասն երկրորդ, հտ. Բ, էջ 145):

Ուսումնասիրողների մի մասը (Մ. Բալինսկի եւ Պ. Լիպինսկի, Մ. Դորոնովիչ, Տ. Գրոմնիցկի, Ա. Լոլլէ, Լ. Լոզինսկի, նորերից՝ Մ. Զակեւսկա-Դուբասովա եւ ուրիշներ) Կամենեցի հայոց գաղութի սկիզբը դնում են ԺԳ. դարը: Օրինակ Ա. Ռոլլէն նշում է որ 1240-1373 թթ. վաւերագրերում Կամենեցը կոչւում էր «Թաթարա-հայկական քաղաք»⁹: Չ. Լեխիցկին այդ առիթով հետեւեալն է գրում. «Դեռեւս ԺԳ. դարակէսին հայերն այստեղ այնպիսի նշանակալի թիւ էին կազմում, որ քաղաքի պատմութեան մի ամբողջ երկար շրջան (1240-1373) կոչուել է Թաթարա-հայկական: Նրանց եւ Թաթարներին այստեղ է հրաւիրել Հալիլի իշխան Լեւ Դանիլովիչը, 1280 թ.: Եւ հէնց մօտաւորապէս այդ ժամանակ էլ... Հիմնուել է Կամենեցի առեւտրա-վաճառականական հայ գաղթավայրը եւ Ս. Մարիամ Աստուածածին անուն եկեղեցին»¹⁰: Վլ. Լոզինսկու կարծիքով, հայերն այստեղ 1250 թուին եկեղեցի ունէին, իսկ ԺԶ. դարում՝ հայոց դպրոց ու եպիսկոպոս¹¹: Այսպիսով անվարան կարելի է պնդել, որ հայերը Կամենեցի եթէ ոչ հիմնադիրները, ապա առնուազն քաղաքը

6. S. BARACZ, *Pamiętnik drzewoj Polski*, Lwow, 1855, էջ 197:

7. M. ROLLE, *Z zycia ormian kamiennickich w XVIII wieku*, «Z minionych stuleci» ժողովածոյի մէջ, Lwow, 1908, էջ 192:

8. Բոմի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հոռովայ, էջ 12-13:

9. DR. ANTONI, *Nowe Opowiadania historyczne, երկրորդ հրատ.*, Lwow, 1883, էջ 125:

10. CZ. LECHICKI, *Kosciol Ormian W Polsce*, Lwow, 1925, էջ 35:

11. Հայրնմիք (ամսագիր), Բոստոն, 1929, թիւ 5, էջ 82:

զարգացնող-ճոխացնող տարրերից էին բնակավայրը հիմնելու ժամանակներին:

Լուցկի հայերի մասին ամենավաղ յիշատակութիւնը Բա-
րոնչը վերագրում է ԺԴ. դարավերջին: Մօտ 1390 թ., գրում է
նա, ղոմինիկեաններն այստեղ եռանդուն քարոզչական գործու-
նէութիւն են ծաւալել «ուկրայինացիներին, հայերին եւ այլ
հերձուածողներին դարձի բերելու համար»¹²: «Ակնարկ հայոց
պատմութեան» գրքում նա Լուցկի մասին հետեւեալն է գրում.
«Հաւանաբար այստեղ շատ վաղուցուանից էին հայեր ապրում,
երբ 1492 թ. Յունուարի 22ին իրենց եպիսկոպոսի գլխաւորու-
թեամբ ողջունեցին Սիգիզմունդ կայսրին, Վլադիսլաւ Լազիշլ-
լոյ թագաւորին եւ լեհական թագաւորութեան կարեւոր գործերի
վերաբերեալ բանակցութիւններ վարելու համար այստեղ ժա-
մանած միւս իշխաններին» (Ռըս ջեյուվ, էջ 152): Զախարիա-
սեւիչի կարծիքով հայերը Լուցկ են մտել Կիւեւից¹³: Լուցկը
լեհահայ հնագոյն գաղթավայրերից են համարում նաեւ Տ.
Գրոմնիցկին, Վ. Լոզիսկին եւ ուրիշներ¹⁴: Լեհ արդէ պատ-
մագիտութիւնը ապացուցուած է համարում որ Լուցկի հայերը
իրենց Ս. Ստեփանոս հին եկեղեցին հիմնովին վերակառուցել
են 1377 կամ 1378 թուին¹⁵:

ԺԴ. դարակէսին Լուցկը հայաշատ գաղթավայր լինելու
մասին բազմաթիւ վաւերական փաստաթղթեր կան հայկական
աղբիւրներում: Այս տեսակէտից առանձնապէս կարեւոր են
Մեսրոպ Ա. Արտազեցի կաթողիկոսի (1359-1372 թթ.) 1364 թ. եւ
Թադէոս կաթողիկոսի (1382-1392 թթ.) 1384 թ. կոնդակները
լեհահայութեանը Գրիգոր Ա. եպիսկոպոսին լեհահայ թեմի
առաջնորդ նշանակելու եւ Յովհաննէս եպիսկոպոսի թեմակալ-
ութիւնը վերահաստատելու մասին: Կոնդակի մէջ, որպէս վի-
ճակաւոր քաղաքներ, Լվովից ու Վլադիմիրից յետոյ, նշուած
է Լուցկը¹⁶: Իսկ Մեսրոպ Արտազեցու 1364 թ. կոնդակի այն
հատուածը, որտեղ նա գրում է թէ իր նշանակած թեմակալից
առաջ այդ վայրերում առանց իր գիտութեան գործում էին այդ

12. S. BARACZ, *Rys dziejow kaznodziejskiego w Polsce*, t. 2, Lwow, 1861, էջ 315:

13. FR. ZACHARYASIEWICZ, *Wiadomosc o Ormianach w Polsce*, Lwow, 1842, էջ 8:

14. T. GROMNICKI, *Ormianie w Polsce*, *Encyklopedia koscielna*, t. 17, էջ 440-441; Հայքնիք, 1929, թիւ 5, էջ 82:

15. K. STOPKA, *Kosciol Ormianski na Rusi, տե՛ս «Nasza przeszlosc»* (Studia z dziejow Kosciola i kultury katolickiej w Polsce), t. 62, Krakow, 1984, էջ 52:

16. Կամենից տաքեփիք հայոց Լեհաստանի, կազմեց Ղ. Ալիշան, Վենետիկ, 1895, էջ 5, 217:

Թեմի եպիսկոպոսներ («Իսկ այնոքիկ որ մինչեւ ցայժմ կային առ ձեզ՝ առանց մերոյ աթոռոյս հրամանի, ոչ էին ուղղակի, այլ վարձկանք»¹⁷), ցոյց է տալիս, որ Լուցկում կարող էին հայեր ապրած լինել ժ. դարի վերջերից, քանի որ եպիսկոպոսի նստավայր եւ Թեմի վիճակ յայտարարելու համար քաղաքը պէտք է ոչ միայն հայաշատ լինէր, այլեւ շրջակայքի հայոց եկեղեցական կեդրոնը:

Լվովի մասին Բարոնչը հետեւեալն է գրում. «Հայերի այստեղ գալու ժամանակը դժուար է որոշել: Բանաւոր աւանդութեամբ* հայերն այստեղ 1183 թ. փայտաչէն եկեղեցի են ունեցել: Ենդժէյ Կոչլերը պնդում է, որ նրանց այստեղ է բերել Լեւոն իշխանի հայր Դանիէլը: Նիեսիցկին էլ ասում է թէ մօտ 1200 թ. Ֆրանցիսկեանները նրանց են գիջել Ս. Վալենտի անունով իրենց մատուռը... Բայց այդ ժամանակ աշխարհում Ֆրանցիսկեաններ չկային: Եան Ալնպեխը հաղորդում է, որ հայերը մօտ 1280 թ. են այստեղ հիմնուել՝ ռուսական իշխանների խնամակալութեան տակ: Հաւանաբար հնագոյն ժամանակներից այստեղ հայեր կային «եզրակացնում է Բարոնչը»¹⁸: Նա հաւատ է ընծայում լեհական ու հին ռուսական աղբիւրներից քաղած այն տեղեկութեանը, թէ երբ լիտուական զօրքերը 1327 թ. պաշարել էին Լվովը, «հայերը Լվովի պաշտպանութիւնում հրաշքներ են գործել»¹⁹: Ընդունելով որ Լվովի հայոց գաղութը ստեղծուել է քաղաքի հիմնարկութեան ժամանակ, այսուամենայնիւ նա գաղթօջախի սկզբնաւորման հաւաստի փաստարկներ է համարում լվովահայերին տուած Կազիմիր Մեծի 1356, 1367 թթ. հրովարտականքն ու ցայսօր կանգուն հայոց եկեղեցու հիմնարկութիւնը (1363 թ.): Ստ. Ագոնցն այս առիթով գրում է. «Որպէս պատմէ Ստեփանոս վարդապետ Ռօջբայ, առեալ ի ստուգագիր պատմազրէ ուրումն ի յիսուսեան կարգէ (Բարոնչից մեր մէջքերած հատուածից երեւում է, որ դա Կ. Նեսեցկին էր: Ռ.Հ.), հայք ի սկզբանէ անդ չունելով առանձին եկեղեցի, կատարէին զաստուածային պաշտամունս ի մատրան սրբոյն Վալենտիոսի շնորհեալ նոցա առ ժամանակ մի ի Ֆրանչիսկեանց, որ ցայսօր կոչի Մատուռն Հայոց: Ընդ այն ժամանակս՝ կամ փոքր մի գկնի՝ կատարէին զպաշտումս իւրեանց եւ եկեղեցւոյ Մարիամու Մազ-

17. Անդ, էջ 6:

* Դա ոչ թէ «բանաւոր աւանդութիւն» էր, այլ այդ եկեղեցու յիշատակարանում նշուած գրաւոր փաստաթուղթ, տե՛ս յաջորդ յղումները:

18. Ս. ԲԱՐՈՆՉ, Ռըս ջեյուվ, էջ 104:

19. Անդ:

դադենացւոյ դոմինիկեանց. զոր բաց ականդէ՝ ցուցանեն եւ գերեզմանք հայոց հայկական գրուածովք, եւ պատարագի զգեստը ըստ ծիսի հայոց ի վաղընջական ոսկեթել դիպակաց, որք տեսանին անդ մինչեւ ցայժմ: Ապա ի 1183 (ընդգծ. իմը: Ռ.Հ.) շինեցին առանձին եկեղեցի քարակերտ, որով վարեցան ըստ ասելոյն նորին Ստեփանոսի վարդապետի ամս 180, զի 1363 ի նմին տեղւոյ կառուցին քարաշէն եկեղեցին, որ՝ կայ մինչեւ ցայսօր. զլիաւոր բարերարք շինութեան եկեղեցւոյս եղեն Յակոբ որդի Շահնշահի կաֆայեցի. եւ Փանոս որդի Աւրանի զաղացի. զորոց զմուրհակ կամ կտակագիր որ վասն շինութեան այսր եկեղեցւոյ, ի դէպ համարիմք աստանօր յառաջ բերել. ընդ օրինակեալ ըստ տառից ի բուն նախատիպ մագաղաթեայ պատճէնէ անտի²⁰: Ապա բերում է վաւերագիրը:

Վկայակոչելով 1183 թ. Լվովում հայոց փայտաշէն եկեղեցու գոյութիւնը նշող ձեռագիր մի յիշատակարանից քաղած տուեալը՝ Մ. Բժշկեանը, Ղ. Ինճիճեանը, Ա. Ալթունեանը եւ ուրիշներ, նշում են որ Լվովում ԺԲ. դ. հայաշատ գաղթօջախ է եղել²¹: Մ. Բժշկեանը մէջբերում է Հաճկատար եկեղեցու Յիշատակարանը, որտեղ գրուած է. «Աթոռանիստ եկեղեցին Հայոց ի Լվովայ շինեցաւ յամի Տեառն 1183 թ. փայտաշէն. իսկ 1363 թ. շինեցին քարաշէն»²²: Լեհահայ պատմաբան Յր. Զախարիասեւիչի վկայութեամբ՝ Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Աբբահայր, Աստուածաշնչի հայերէն լաւագոյն հրատարակութիւններից մէկի հեղինակ Յովհաննէս Զոհրապեանը 1791 թ. Լվովում տեսել է 1130, 1183, 1148, 1200 եւ 12445 թթ. հայատառ տապանաքարեր²³: Սակայն Յր. Զախարիասեւիչը, ընդունելով Լվով բերդաքաղաքը Լեռն Դանիլովիչ իշխանի կողմից հիմնադրելուց առաջ այստեղ հայ բնակչութիւն լինելու հաւանականութիւնը, այսուամենայնիւ կասկած է յայտնում Յովհ. Զոհրապեանի տուեալների հանդէպ՝ ենթադրելով թէ իբր Յովհ. Զոհրապեանը, այդ հմուտ հայկաբան-պատմաբանն ու աստուածաբանը, Բրիտոսի թուականը չփոթել է հայոց Մեծ թուականութեան հետ: Զախարիասեւիչի այս միամիտ կասկածը հիմք ընդունելով, ուկրաին որոշ պատմաբաններ յիշեալ տապանա-

20. ՍՏ. ԳԻԻՎԵՐ ԱԳՈՆՑ, Աշխարհագրութիւն չորից մասամբ աշխարհի, մասն երկրորդ, հտ. Բ., էջ 132-133:

21. Ղ. ԻՆՃԻՃԵԱՆ, Հնախոսութիւն Հայաստանից, հտ. 1, Վենետիկ, 1835, էջ 343: Ա. ԱԼԹՈՒՆԵԱՆ, Տեղեկագրութիւն որք ի Մօլտօ-Վալաքիա, Հումգարիա եւ ի Լեհաստան, Ֆօքսան, 1877, էջ 122 եւայլն:

22. Մ. ԲԺՇԿԵԱՆ, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան..., էջ 104:

23. ՖՐ. ԶԱԽԱՐԻԱՍԵՎԻՉ, նշուած աշխ., էջ 17:

քարերի մասին տեղեկությունը անհիմն են համարել: Մինչդեռ Մխիթարեան պատմաբանի տուեալները հաստատող տեղեկություն է բերում Ստ. Ռոշջան: Նա 1730ական թուերին Լվովում հայոց թուականութեան մի տապանաքար է տեսել, որը համապատասխանում է Յուլեան տոմարի 1277 թուականին²⁴: Ստ. Ագոնցից վերը մէջբերեալ հատուածում տեսանք, որ 1790ական թուականների վերջին Լվովում հայոց տապանաքարեր է տեսել նաեւ Ստ. Ագոնցը, որը ցաւօք չի բերել ո'չ այդ տապանաքարերի վերծանութիւնը, ոչ էլ թուականը (տե'ս Ստ. Ագոնց, Աշխարհադրութիւն, մասն երկրորդ, հտ. Բ., էջ 132): Լվովի Պողոսի կոչուող հայկական արուարձանում 1183 թ. Ս. Աննա կոչուող փայտակերտ եկեղեցի լինելու հայկական եւ հին ռուսական աղբիւրների տեղեկութիւններին հաւատ են ընծայել նաեւ լեհ գիտնականներ Ա. Ռոյլէն, Զ. Օբերտընսկին, Զ. Լեխիցկին եւ ուրիշներ: Վերջինս նշում է որ 1363 թ. կառուցուած Հաճկատար քարաշէն եկեղեցու տեղում 1240 թ. կանգուն է եղել փայտաշէն ուրիշ եկեղեցի²⁵:

Այսպիսով, հայերը կարող են անկասկած դիտուել Լվով քաղաքի հիմնադիրները, յետադայում, Լեւ Դանիլովիչի կողմից Լվովի բերդը կառուցող շինարարներից, իսկ բերդաքաղաքը հիմնադրելուց յետոյ՝ այդ քաղաքը շէնացող հիմնական տարրը: Սա մենք պնդում ենք, քանի որ այդ քաղաքում հայերի բնակութեան մասին տուեալները մօտ 100 տարի աւելի հին են, քան Լվովի բերդի հիմնարկութիւնը Դանիլ Լեւ Դանիլովիչի կամ նրա որդի Լեւ Դանիլովիչի կողմից*: Ըստ Բարոնչի, եթէ 1600 թ. Լվովում 1000 տուն հայ էր ապրում, ապա 1784 թ. նրանց թիւը չեշտակի նուազելով՝ հասել էր ընդամէնը 212 հոգու (Ռըս

24. ՍՏ. ՌՈՇՔԱՅ, Ժամանակագրութիւն կամ տարեգիրք..., էջ 126:

25. CZ. LECHICKI, Kosciol Ormianski w Polsce, էջ 33:

* ԺԶ-ԺԷ. դդ. Ժամանակագիրներ Գրունեվէզը, Կրոմերը, Ալնպիւրը, Զիմորովիչը, Լվովի հիմնադիր են համարում Լեւ Դանիլովիչին (իշխել է 1284-1301 թթ.), իսկ Գալիցկո-Վոլինեան տարեգրութիւնները նշում են, թէ Լվովը 1250 թուին հիմնել է Լեւոնի հայր Դանիլը: ԺԸ. դարի 80ական թուականներին Լվովի պարիսպներից մէկի մէջ գտնուած մի քարի վրայ լատիներէն գրուած էր. «Լեւոն դուքսն է իմ հիմքը դրել, եւ յետնորդները ինձ տուեցին Լեոպոլիս անուն» (Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան..., էջ 95; Історія Львів, Київ, 1984, էջ 15): Ուկրային արդի պատմագիտութեան մէջ ընդունուած տեսակէտի համաձայն, Լվովի մասին առաջին տեղեկութիւնը վերաբերում է 1256 թուին: Լեհ եւ ուկրային պատմագիտութիւնը ճշտուած է համարում, որ Լվովը հիմնել է կամ Դանիլը կամ նրա որդի Լեւը՝ 1250 թուին: Տե'ս, Słownik historii Polski, Warszawa, 1973, էջ 232; Історія Львів, Київ, 1984, էջ 14:

ղեյուվ, էջ 191): Ստ. Ագոնցը ժէ դարավերջին լվովահայերի մասին գրում է. «Բայց հայք սակաւ են, զի թիւ նոցա հազիւ ժամանէ 126 ուր երկերիւր ամօք յառաջ էին գերդաստանք 700 եւ աւելի» (նշ. աշխ., էջ 131): Բ. Նանուշի ստոյգ տուեալները, որ նա քաղել է դիւանական փաստաթղթերից, բաւական մօտ են 1784 թ. համար բարոնչի յայտնած տուեալներին: Բ. Նանուշը գրում է, որ լվովահայերը 1648 թ. 147 տուն ունէին, 1654 թ.՝ 73 տուն, 1704 թ.՝ դարձեալ 73 տուն, իսկ 1711 թ.՝ 72 տուն²⁶: Դ. Զուբրիցկու տուեալներով՝ ժն. դ. սկզբին Լվովում ապրում էր 63 տուն հայ ընտանիք²⁷: 1820 թ. Մ. Բժշկեանը Լվովի բնակչութեան մասին գրում է. «Այժմեան ժողովուրդը ի Լվովայ ըստ մեծի մասին են հրեայք, որք յիշատակեալ են զվաճառականութիւնս հայոց»²⁸: Ա. Ալթունեանը 1876 թ. Լվովում ընդամէնը 20 ընտանիք հայ է տեսել²⁹:

Նազլովեցի մասին Բարոնչը հաղորդում է, թէ ըստ բանաւոր աւանդութեան, հայերն այստեղ 1250 թ. եկեղեցի են ունեցել, որը հիմնել են Ղրիմից եկած հայերը, իսկ մէկ այլ աւանդութեամբ մի ժամանակ այս քաղաքը եղել է եպիսկոպոսի նստավայր (Ռուս ղեյուվ, էջ 88): Բարոնչի յիշած բանաւոր աւանդութիւնը Նազլովեցի առումով եւս գրաւոր հիմք ունի: Մ. Բժշկեանը, Նազլովեց եղած ատեն կարդացել է 1645 թ. մի յիշատակարան, ուր նշուած էր, որ այդ թուին Նազլովեցի առաջնորդն էր Անդրէաս Արքայսը: Նոյն էջում Բարոնչը շարունակում է. «Մերք պատմեցին մեզ աւանդութեամբ, թէ Բէշկեցի հայք յՕսմիանի դաշտն աստ եկեալ բնակեցան...»: Այնուհետեւ նշում է, թէ Յիշատակարանը գրուել է «ի վոյթութեան բան (պան. Ռ. Հ.) Պաղլասարին եւ երկոտասան դատաւորացն»³⁰: Նազլովեցի Անդրէաս եպիսկոպոսի մասին մի ամբողջ աշխատութիւն է գրել ժ. դարի լեհ պատմաբան Զ. Օբերտընսկին³¹: Ֆր. Սիարչիսկին 1250 թ. Նազլովեցում հայոց եկեղեցու գոյութեան մասին տեղեկութեանը չհաւատալով, հաւատ է ընծայում մի այլ աւանդութեան, ըստ որի Նազլովեցը ժն. դարում հիմնել են հայերը³²: Զ. Օբերտընսկին գրում է թէ

26. B. JANUSZ, *Mons pius Ormian lwowski*, Lwow, 1928, էջ 13:

27. D. Zubrycki, *Kronika miasta Lwowa*, Lwow, 1844, էջ 69:

28. Մ. Բժշկեան, Ճամապարհորդութիւն ի Լեհաստան..., էջ 96:

29. Ա. ԱԼԹՈՒՆԵԱՆ, Տեղեկագրութիւն հայոց գաղթականութեան..., էջ 123:

30. Մ. ԲժՇԿԵԱՆ, Ճամապարհորդութիւն ի Լեհաստան..., էջ 130:

31. Զ. ՕԲԵՐՏԸՆՍԿԻ, Լեհահայերը եւ անոնց Անդրէաս եպիսկոպոսը Նազլովեցի մէջ, Համդես ամսօրեայ, 1962, թիւ 9-12:

32. Հմտ. В. Григорян, История армянских колоний Украины и Польши, Ереван, 1980, էջ 100:

քաղաքի բնակիչների 1530-1541 թթ. անուանացանկերում հայեր չեն նշուած, իսկ տեղի հայոց եկեղեցին ժՁ. դարավերջի կնիք ունի, հետեւաբար հայերն այս քաղաք են մտել ժՁ. դարի երկրորդ կեսից ոչ շուտ³³: Լ. Կորուինը, Մ. Զակեւսկա-Ռուբասովան, Վ. Գրիգորեանը եւ ուրիշներ Նազլովեցի հայոց գաղութի սկզբնաւորումը համարում են ժԵ. դարը³⁴:

Բարոնչը այնուհետեւ գրում է, թէ մօտ 1643 թ. հայերն այստեղ ունէին 12 դատաւորներից բաղկացած դատարան, որը վերացուեց 1700 թ. (Ռու ջեյուվ, էջ 90): Բարոնչը համապատասխան կոռուաններ չունենալով, գաղութի սկզբնաւորման անվիճելի փաստարկը համարում է Նազլովեցի հայերին տուած Ռաջիւիլի 1615 թ. արտօնագիրը եւ գաղութի սկզբնաւորումը առնուազն 150 տարով ետ է բերում: Ի նկատի ունենալով որ Նազլովեցում ժԷ. դ. գոյութիւն է ունեցել հայոց դատարան, վոյթ եւ եպիսկոպոս-առաջնորդ, հաւատ ընծայելով այստեղ 1250 թ. փայտաշէն եկեղեցի լինելու բանաւոր աւանդութեանը, կարծում ենք Նազլովեցի հայոց գաղթավայրը նոյնքան հին է, որքան Լվովինը:

Սնեատինի հայոց գաղութի սկզբնաւորման համար իբրեւ անառարկելի փաստ, Բարոնչը ընդունում է Սիգիզմունդ Գ.ի 1628 թ. արտօնագիրը*, որով տեղի հայերին թոյլատրւում էր բնակուել քաղաքում, հիմնել եկեղեցի, զբաղուել արհեստներով ու առեւտրով, ունենալ սեփական ինքնավարական մարմին եւ առաջնորդուել այն դատաստանագրքով, որը գործածում էին Լվովի եւ Կամենեցի հայ համայնքները³⁵: Սնեատինը ժԷ. դ. գաղութ է համարում նաեւ Մ. Զակեւսկա-Ռուբասովան (տե՛ս նշ. աշխ., էջ 22), մինչդեռ Մ. Բժշկեանը գրում է, որ 1820 թ. այդ քաղաքի մեծահասակներից լսել է, թէ դեռեւս 300 տարի առաջ (1520 թ.) այստեղ հայերը փայտաշէն եկեղեցի ունէին³⁶: Բժշկեանի լսած բանաւոր աւանդութեան օգտին է Ն. Հելենիուշի մի վկայութիւնը, որ ժԵ. դ. Սնեատինում հայ վաճառական-

33. Զ. ՕԲԵՐՏԸՆՍԿԻ, *նշ. աշխատութիւնը*, Համդէս ամսօրեայ, 1962, թիւ 9-12, էջ 463, 468:

34. L. KORWIN, *Ormianskie rody szlacheckie*, Krakow, 1934, էջ 28; Վ. Գրիգորեան, *նշ. աշխ.*, էջ 101:

* Արտօնագրի բնագիրն այժմ պահւում է Լվովի պետական կեդրոնական դիւանում/ЦГИА Украины во Львове, фонд 52, опис 3/47-54, էջ 103-109:

35. S. BARACZ, *Zywoty ks. S. Stefanowicza arcybiskupa Lwowskiego Ormianskiego, Dodatek tygodniowy przy Gazecie Lwowskiej*, Lwow, 1859, թիւ 29, էջ 123:

36. Մ. ԲԺՇԿԵԱՆ, *Ճամայարիորդութիւն ի Լեհաստան...*, էջ 125:

ները արեւելք-արեւմուտք կապերի մէջ միջնորդի դեր էին կատարում³⁷: Լ. Կորուինը Սնեատինի հայոց գաղթավայրի սկիզբը աւելի ետ է տանում՝ նշելով որ հայերն այստեղ բնակւում էին ժե. դ. առաջ (տե՛ս Լ. Կորուին, նշ. աշխ., էջ 28): Հիմնուելով 1589 թ. պատմական վաւերագրերից մէկում պահպանուած այն տեղեկութեան վրայ, ըստ որի, երբ Թաթարներն այդ թուին յարձակուեցին Սնեատինի վրայ, գերեւելները մէջ բազմաթիւ հայեր կային, ուկրայինացի պատմաբան Վ. Գրաբովեցկին Սնեատինի հայոց գաղութի հիմնարկութեան ժամանակը համարում է ժՁ. դարը:

Բարոնչը նշում է հայերը 1728 թ. այստեղ 484 հոգի էին, իսկ 1860 թ.՝ մօտ 300 (Ռըս ջեյուվ, էջ 165, 167): Ստ. Ագոնցը 1791 թ. Սնեատինում 547 հայ է հաշուել, իսկ 1800 թ.՝ 50 ընտանիք³⁸: Դիւանական փաստաթղթերը սակայն ցոյց են տալիս, որ 1752 թ. Սնեատինում 54 ընտանիք հայ կար, իսկ 1860 թ.՝ 135 հոգի³⁹: Մ. Բժշկեանը 1820 թ. այստեղ 70 տուն հայ է հաշուել, որոնք յստակ խօսում էին հայերէն, իսկ ծերերից շատերը ռուս լեզու չգիտէին⁴⁰: Ա. Ալթունեանը գրում է. «Նրկու եկեղեցի չինած են հայք, որոնցից մէկը, հայերից լքուած լինելու պատճառով, լեհերը գրաւած են այսօր, 40 տուն հայ կայ, որոնցից շատերը փոքր ի շատէ գիտեն հայերէն, բայց անոնք, որ 50 տարեկան են: Նրիտասարդք ամենեւին չգիտեն⁴¹»:

Այսպիսով՝ Սնեատինի հայերի մասին եղած տուեալների մեծ մասը մեզ թոյլ է տալիս եզրակացնել, որ գաղութը հիմնուել է առնուազն ժՁ. դարում:

Ստանիսլաւի հայոց գաղթօջախին Բարոնչը անդրադարձել էր դեռեւս 1858 թ. հրատարակուած իր «Ստանիսլաւ քաղաքի յուշարձանները» մենագրութեան մէջ, որտեղ գրում է թէ քաղաքի հիմնադիր Ստ. Պոտոցկին մօտ 1662 թ. հրեաներին եւ Մոլդաւիայից հրաւիրած հայերին դաւանանքի ազատութիւն է տալիս, թոյլատրում է առաջնորդուել իրենց օրէնքներով, զբաղուել առեւտրով ու արհեստներով⁴²: Նոյն գրքի 30-34 էջերում նա գետեղել է նաեւ յիշեալ արտօնագիրը, իսկ «Ակնարկ հայոց

37. E. HELENIUSZ, *Rozmowy o Polskiej Koronie*, Krakow, 1876, էջ 478-480:

38. ՍՏ. ԳԻՒՎԷՐ ԱԳՈՆԶ, նշ. աշխ., մասն 2, էջ 142:

39. Библиотека АН Украины во Львове, отдель рукописей, фонд Осолинских, N. 2825/2, էջ 2-6 (Հմտ. Վ. Գրաբովեցկու նշ. յօդուածը, ԻՍՂ - 1965, էջ 144):

40. Մ. ԲԺՇԿԵԱՆ, Համապարհորդութիւն ի Լեհաստան..., էջ 125:

41. Ա. ԱԼԹՈՒՆԵԱՆ, Տեղեկագրութիւն հայոց գաղթականութեան..., էջ 134:

42. S. BARACZ, *Pamiętki miasta Stanisławowa*, Lwow, 1858, էջ 12-13:

պատմութեան» գրքում գրում է, թէ Պոտոցկին հայերի համար կառուցել է տալիս եկեղեցի, 1677 թ. հրովարտակով նրանց թոյլատրում է 12 հոգուց բաղկացած դատարանով ու վոյթով սեփական իրաւադրութիւն բանեցնեն. այնուհետեւ նշում է որ Կամենեցը թուրքերին անցնելուց յետոյ Ստանիսլաւի հայու-թիւնը համալրւում է այնտեղից փախստական հայերով (Ռըս ջեյուվ, էջ 167): Վլ. Լոզինսկին եւս պնդում է, որ Ստանիսլաւում հայերը բնակւում էին քաղաքի հիմնադրման օրուանից (Հայրենիք, 1929, թիւ 5, էջ 82): Ստ. Ագոնցը այս քաղաքի մասին գրում է. «Թիւ բնակչացն հասանէ ց3500. յորոց 415 են յազգէ մերմէ բովանդակեալ ի 70 գերդաստանս... Հիմնարկութիւն քաղաքիս եղեւ ի 1670 ի Սդանիսլաւոս լեհ իշխանէ... զոր յիւր անուն անուանեալ, պատրաստեաց ի բնակութիւն վաճառականաց հայոց ազգին. զորս հրաւիրեալ էր ըստ մասին ի Մոլտաւիոյ, եւ ըստ մասին ի Մաճառաց, շինելով նոցա եւ եկեղեցի իւրով ծախիւք. այլ 1741 հայք հիմն արկին նոր եկեղեցւոյ քրտնաջան խնամատարութեամբ աւագերիցու տեառն Յակոբ Վարդերեսովիչ սրբակրօն քահանայի, որ կատարեցաւ ի 1751. որ եւ է մեծաշէն եւ գեղեցիկ քան զամենայն եկեղեցիս հայոց կառուցեալ ի լեհ, առ որով է եւ բնակարան աւագերիցուն, որ ըստ սովորութեան երկրին անուանի օֆիցիալ, զի է ընդհանուր փոխանորդ արքեպիսկոպոսին հայոց ի բոքուցիա զաւառի» (Աշխարհագրութիւն..., էջ 140): Այսպիսով, Ստանիսլաւը Ռեչ-Պոսպոլիտայի այն քաղաքներից է, որը հիմնելու եւ մանաւանդ ճոխացնելու մէջ հայերը վճռական դեր են ունեցել: Իրօք, քաղաքի հիմնադիր Պոտոցկու հայանպաստ-հայասէր կեցուածքը նախ եւ առաջ թելադրուած էր քաղաքը կառուցող-շէնացնող տարրով բնակեցնելու նրա դիտաւորութեամբ: Ընդ որում նրա այդ դիտաւորութիւնը այնտեղ է հասնում, որ յանուն իր հիմնարկած քաղաքի բարգաւաճման, հայերի համար կառուցում է եկեղեցի, նրանց թոյլատրում է ազատօրէն շարժուեն իրենց ազգային եկեղեցու դաւանութեամբ այն դէպքում, երբ նոյն ժամանակ Վատիկանը եւ լատին եկեղեցին ամենաանգիղջում եւ վճռական գործողութիւններով ձգտում էին դաւանափոխել հայերին:

Այս իրողութիւնը բաւական է համոզուելու համար, որ իշխան Պոտոցկին եւս, ինչպէս Ռութէնիայի եւ միջնադարեան Լեհաստանի իշխաններն ու թագաւորները, հայերին ամէն գնով սիրաշահում էին նրանց շինարարական արուեստը եւ տուածուրիկ ձեռներէցութիւնը նորահիմն քաղաքների բարգաւաճմանը ծառայեցնելու համար:

Ուշ միջնադարեան Լեհաստանի ամենաաշխույժ եւ հարուստ հայկական կատարներէից մէկը՝ Ձամոստիէն, հիմնել է իշխան Եան Ձամոյսկին, 1580 թ.։ Բարոնչը լեհերէն թարգմանութեամբ ամբողջութեամբ բերում է հայերէն առած Ձամոյսկու 1585 թ. Ապրիլի 3ի արտօնագիրը, որով նրանց թոյլատրւում էր բնակուել քաղաքում, ազատօրէն զբաղուել առեւտրով ու արհեստներով, շարժուել իրենց դաւանութեամբ ու օրէնքներով, կառուցել եկեղեցի ու տներ (Ռես ջեյուվ, էջ 176-177)։ Ձամոյսկու արտօնագրի մասին լսելով, պատմում է Բարոնչը, Կաֆայից, Պարսկաստանից, Կեսարիայից, Կապադովկիայից, Նիւեանից եւ ամբողջ Փոքր եւ Մեծ Հայքերից հայեր եկան բնակուեցին այստեղ։ Լվովից Ձամոյսկու հրաւիրած Լուկաշ քահանան փայտաշէն եկեղեցի հիմնեց այստեղ, ժամակարգութիւն հաստատեց եւ Գալուստ քահանային* նշանակեց եկեղեցում։ Սրա յաջորդ Յակոբ Ալթունովիչը քարաշէն եկեղեցի կառուցելու համար 1623 թ. տեղի վաճառականներից դրամ հանգանակեց, իսկ Եան Ձամոյսկու որդի Տոմաշ Ձամոյսկին, հօր մահուանից յետոյ, 1625 թ. հաստատեց 1585 թ. արտօնագիրը եւ իր միջոցներով՝ 1628 թ. դրամ յատկացրեց եկեղեցու կառուցման համար, որը 1633 թ. արդէն կանգուն էր։ «Հայերն այստեղ ի վերջոյ այնքան հաւաքուեցին, - շարունակում է պատմաբանը, - որ նոյնիսկ հայոց դատարան հիմնուեց... Յետագայում, 1784 թ. ... այստեղ համարեայ հայ չէր մնացել»⁴³։ Մ. Բժշկեանը 1820 թ. Ձամոստիէում հայ չի տեսել⁴⁴, մինչդեռ Ա. Ալթունեանը 1876 թ. գրում է. «Եթէ ազգաբանական հետազօտութիւն մը ըլլայ, թերեւս 100 ընտանիքի չափ հայ կ'ելլէ, բայց օտարաց հետ խնամիրութեամբ կորսուածի պէս են... Հայոց փառաւոր եկեղեցին լեհացիք զրաւած են այժմ»⁴⁵։ Ձամոստիէի 1586 թ. հիմնարկութեան եւ իշխան Ձամոյսկու կողմից նոյն թուին հայերին այստեղ հրաւիրելու մասին նշուած է նաեւ «կամենից տարեգրքում»⁴⁶։

Լեհաստանի հայոց գաղթավայրերի աշխարհագրութեան համար առանձնապէս կարեւոր են Կրակով, Լուբլին, Վարշաւա, Տորուն, Ստրիյ եւ Ժուկով բնակավայրերում հայոց գաղութներ լինելու մասին բարոնչի տուեալները, որովհետեւ այդ

* Ձամոստիէի առաջին հայ քահանայ Գալուստի մասին տեղեկութիւն պարունակող փաստաթուղթը, որից օգտուել է Բարոնչը, այժմ պահւում է Վրոցլայի Օսոյինսկիների գրադարանի ձեռագրատանը (թիւ 3618/2)։

43. Ս. ԲԱՐՈՆՅԻ, Ռես ջեյուվ, էջ 176-177։

44. Մ. ԲԺՇԿԵԱՆ, Ճամապարհորդութիւն ի Լեհաստան..., էջ 127։

45. Ա. ԱԼԹՈՒՆԵԱՆ, Տեղեկագրութիւն հայոց գաղթականութեան..., էջ 135։

46. Ղ. ԱԼԻՇԱՆ, Կամենից տարեգիրք..., էջ 54։

վայրերի հայերի վերաբերեալ շատ քիչ տեղեկութիւններ են յայտնի:

Բարոնչի տուեալներով Կրակովում հայերի մասին յիշատակութիւն կայ դեռեւս Վլադիսլաւ Վարնենչիկի (1425–1444) ժամանակներից: «Այդ քաղաքի ռադայի վճռադրերում նշուած է, – գրում է լեհահայ պատմաբանը, – որ Ֆրանցիշեկ հայը սեփական կամքով իբրեւ սեփականութիւն Վլադիսլաւ Վարնենչիկին է տուել թէ իր ունեցուածքը եւ թէ՛ իր անձը, այն է՝ պարտաւորուեց քանի ողջ է, թագաւորի խոհանոցին տրամադրի այնքան ճաշի աման, կաթնայ եւ այլ սպասեղէն, որքան որ պէտք լինի: Իսկ դրա համար թագաւորն իրեն ոչ մի դրամական հատուցում չպիտի տար: Եթէ անժամանակ մահանար, Լվովում եւ այստեղ (Կրակովում: Ռ. Հ.) գտնուող իր ամբողջ շարժական ու անշարժ ունեցուածքի մէկ կէսը պիտի մնար իր երեխային, իսկ մնացած կէսը՝ թագաւորին» (Ռըս ջեյուվ, էջ 99): Քանի որ մինչեւ 1611 թ. Լեհաստանի արքայանիստ մայրաքաղաքը Կրակովն էր, ապա Կրակովում ԺՁ. դ. հայ բնակչութիւն լինելու անուղղակի կոռուան կարելի է դիտել նաեւ Բարոնչի մի քանի այլ փաստեր եւս: Օրինակ, առանց աղբիւրը նշելու նա գրում է թէ Սիգիզմունդ Բ Աւգուստի (1548–1572) «անձնական պահազօրը կազմում էին հայերը» (Ռըս ջեյուվ, էջ 63), Յակոբ Նուրկեւիչը նրա դեսպանն էր (Ժուռտը սլաւնըխ օրմիան, էջ 254–255) եւ այլն:

Հետաքրքիր է դիւանական աղբիւրներից քաղած Մ. Զակ-ժեւսկա-Դուբասովայի մի տեղեկութիւնը, թէ այդ նոյն թագաւորի պալատական երեք դերձակները հայեր էին⁴⁷: Կը նշանակի Կրակովում ապրել են նաեւ հայ արհեստաւորներ: Նոյն պատմաբանի այն տեղեկութիւնը, թէ 1550–1552 թթ. այստեղ մեծ քանակութեամբ տաճկական քրքում (չափրան) է վաճառուել⁴⁸, որը հիմնականում հայերն էին իրացնում, հիմք է տալիս ենթադրելու, որ Կրակովում ԺՁ. դ. գործել են նաեւ հայ վաճառականներ՝ թէեւ պատմագիտական գրականութեան մէջ կան փաստեր, որոնք թոյլ են տալիս պնդելու, որ հայերը Կրակովում առեւտուր էին անում դեռեւս ԺԴ. դ.: Օրինակ՝ Ալ. Զոլովսկու հրատարակած Լվովի քաղաքապետարանի վճռադրերում արձանագրուած են Ասլան Փանոսովիչ, Բոգդան Ուորովիչ եւ այլ հայ վաճառականներ, որոնք Կրակովցի վաճառականներից

47. M. ZAKRZEWSKA-DUBASOWA, *Ormianie w dawnej Polsce*, Lublin, 1982, էջ 163:

48. Անդ, էջ 130–131:

պարտքով փող են վերցրել, ապրանք են գրաւ դրել եւ այլն⁴⁹։ Կրակովի հայ բնակչութեան մասին Բարոնչի տուեալներն առատ են մանաւանդ Ժէ-ԺԼ. դարերում։ Այսպէս՝ Աւգուստին Պերս հայը 1613 թ. մտնում է Կրակովի Դոմինիկեան միաբանութիւն, Անտոնի հայը 1617 թ. Կրակովի Կարմելիտեանց ուխտի անդամներից էր, Լ. Սերբակովիչը 1650 թ. քաղաքի Դոմինիկեան ճեմարանում աստուածաբանութեան դոկտոր էր (Ժուռտը սլաւերի օրմիան, էջ 257, 286), լվովցի հարուստ վաճառական Դ. Բոգդանովիչը 1680 թ. Կրակովում տուն ունէր, Յակոբ Դերյակուբովիչը, Կոստանդինը եւ Ղազարը մօտ 1740 թ. քաղաքային ռադայի անդամներից էին, Միխայ Աւեդիկը այդ ժամանակ Կրակովի ստրելեցների դպրոցի տնօրէնն էր եւ այլն (Ռըս ջեյուվ, էջ 99)։ Սակայն Բարոնչի այն տեղեկութիւնը, որ հայերն այստեղ ոչ եկեղեցի են ունեցել, ոչ քահանայ, ցոյց է տալիս, որ Կրակովի սակաւաթիւ հայութիւնը երեւի երբեք կազմակերպուած գաղութ չի կազմել։

Հիմնուելով Լվովի հայոց դատարանի վճռադրերի վրայ Բարոնչը գրում է, որ Լուբլինում հայերը եկեղեցի են ունեցել, իսկ տեղի վաճառականները մօտ 1600 թ. այստեղից Մոսկուա էին արտահանում ապրանքներ, դրանց դիմաց գնում էին մոմ, կաշի (եռւֆտ), սամոյր եւ տանում էին Գդանսկում վաճառելու (Ռըս ջեյուվ, էջ 104)։ Այդիսին Պիդուս Լվովի հայոց ճեմարանի աշակերտներին թուելիս, նշում է նաեւ 16ամեայ մի լուբլինահայի⁵⁰։ Մ. Բժշկեանը եւս Լուբլինում հայոց եկեղեցի է տեսել, որը 1820 թ. արդէն լեհերի ձեռքն էր «առ ի չգոյ է անդ Հայոց»⁵¹։ Լուբլինի հայոց եկեղեցու մասին Ա. Ալթունեանը 1876 թ. գրում է. «Հայոց քարաշէն սիւնազարդ ու փառաւոր եկեղեցին լեհաց ձեռքը կը գտնուի, որոյ շատ կողմերը հայերէն ու լատիներէն լեզուաւ խառն արձանագրութիւններ կը տեսնուին եւ որոյ բակը մէկ քանի հայերէն տապանաքարեր կան։ Կ'ըսեն այս եկեղեցւոյ հազարի մօտ մատենաները տէրութիւնը գրաւած է»⁵²։ Հիմնուելով դիւանական փաստաթղթերի ու հին վճռադրերի վրայ, Լուբլինում հայ վաճառականների գոյութեան մասին Բարոնչի տեղեկութիւնները հաստատող տուեալներ է բերում Մ. Զակեւսկա-Դուբասովան⁵³։

49. Pomniki dziejowe Lwowa, t. 1, najstarsza księga miejska 1382-1389, Wyd. Al. Czołowiecki, we Lwowie, 1892, dok. N. 98, էջ 148։

50. Բոմի միութիւն Լեհաստանի... էջ 104։

51. Մ. Բժշկեան, Ճամայաքաղաքային ի Լեհաստան... էջ 127։

52. Մ. Ալթունեան, նշ. աշխ., էջ 135։

53. ԶԱԿԵՎԻՍԿԱ-ԴԻԲԱՍՈՎԱՆ, նշ. աշխ., էջ 140-142, 203։

Արեւելեան ապրանքները դիւրութեամբ վաճառելու պարագան, — գրում է Բարոնչը Վարչաւայի հայոց զաղութի մասին, — հայերին առաջնորդեց այս քաղաքը, ուր նրանք արդէն 1670 թուին, ի դէմս Գաբրիէլ Ջախնովիչի, կապելլան (տնային քահանայ) ունէին: 1689 թ. այստեղի հայոց քահանայ Նուզեֆ Մըսըրովիչը հայկական ժամասացութիւնը կատարում էր Աւգուստինեան եկեղեցում... իսկ նրա յաջորդը՝ Բենեդիկտեան եկեղեցում» (Ռըս ջեյուվ, էջ 176): Քաղաքում 1672 թ. ինքնուրոյն հայոց եկեղեցի չլինելու մասին է գրում «տաճկաց» յարձակումի պատճառով Լվովից վարչաւ փախած Գրիգոր ոսկերիչը իր կազմած սաղմոսարանի յիշատակարանում. «Գրեցաւ եւ կատարեցաւ Ս. երգարանս... ի քաղաքս Վարչաւ, ձեռամբ անարժան եւ բազմամեղ ոսկերիչ Գրիգորի...», եւ եկեալ տեսաք զքաղաքն Վարչաւ, որ ոչ ունին իւրեանց առանձին եկեղեցի մեր հայոց ազգս, եւ ոչ մին փոքրիկ աղօթատեղի...»⁵⁴: Վարչաւայի 1691 թ. ծխամատեաններից քաղած տեղեկութիւնների վրայ յենուելով՝ քաղաքի հայոց քահանայ Նուզեֆ Մըսըրովիչին յիշատակում է նաեւ Յր. Ջախարիասեւիչը⁵⁵: Բայց վարչաւահայերի վերաբերեալ ամենավաղ տեղեկութիւնը վերաբերում է Ժ2. դարավերջին: Ոստելով 1602 թ. Պարսկաստան գնացած Վարչաւացի Սեֆէր Մուրատովիչի մասին, Բարոնչը գրում է, որ սրա հայրը Սիգիզմունդ Գ.ի պալատականներից էր (Ժըվոտը, էջ 234): 1672 թ. Նազլովեցը թուրքերին անցնելուց յետոյ Վարչաւահաստատուեց Մինասովիչների մի ճիւղը, որը բազմաթիւ պետական—հասարակական եւ մշակութային գործիչներ է տուել քաղաքին (Ժըվոտը, էջ 202—218):

Հետաքրքիր է Բարոնչի այն տեղեկութիւնը, որ յայտնի վաճառական Գրիգոր Լըշկեւիչը 1750 թ. Վարչաւայի քաղաքագլուխն էր (քուրմիսոր), իսկ 1781ին քաղաքային ռադայի նախագահը (Ժըվոտը, էջ 179):

Բարոնչի ու Մ. Ջակօեւսկա-Դուբասովայի տուեալներով ԺԼ. դ. այստեղ եղել են նաեւ հայ ձեռնարկատէրեր, որոնց մասին կը խօսենք իր տեղում: Տ. Գրոմնիցկու հաշուումներով, 1780 թ. Վարչաւայում 50 տուն կար⁵⁶:

Որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում Ստրիյ, Ժուկով եւ Տորուն բնակավայրերում հայեր ապրելու մասին Բարոնչի թէեւ շատ թուուցիկ, բայց արժէքաւոր տեղեկութիւնները:

54. Կամեմից տարեգիրք..., էջ 194:

55. FR. ZACHARYJASIEWICZ, *Wiadomosc o Ormianach w Polsce*, էջ 9, թիւ 2 ծանօթագրութեան մէջ:

56. T. GROMNICKI, *Ormianie w Polsce*, Encyklopedia koscielna, t. 17, էջ 447:

Ժողովրդի հայոց գաղութի մասին տուեալը նա քաղել է Ստանիսլաւի հայոց եկեղեցու 1712 թ. մի լատիններէն ձեռագրից, որի համապատասխան հատուածը մէջբերելով, այս քաղաքը ԺԸ. դ. հայոց գաղութ է համարում (Ռըս ջեյուվ, տե՛ս էջ 179ի տողատակի ծանօթութիւնը): Ստրիյ քաղաքի հայ բնակչութեանը վերաբերող տուեալը նա քաղել է Լվովի հայոց դատարանի վճռագրերից (Ռըս ջեյուվ, էջ 172ի թիւ 159 ծանօթագրութիւնը): Տորունի մասին նշում է թէ հայ վաճառականներն այստեղ ԺԶ. դարից սկսած առեւտուր էին անում (Ժըւոտը, էջ 70, 174), իսկ վրովցի հայ վաճառականները Տորունում կրպակներ ունէին (Ռըս ջեյուվ, էջ 172ի թիւ 159 ծանօթագրութիւնը): Սակայն դիւանական փաստաթղթերից երեւում է, որ հայերը Տորունում առեւտուր էին անում շատ աւելի վաղ՝ 1382 թուին: Այսպէս, Ալ. Զոլովսկու հրատարակած Լվովի քաղաքապետարանի դատական վճռագրերից երեւում է, որ Տորունը այդ ժամանակներում հայ վաճառականների հիմնական հանգրուաններից մէկն էր: Յիշեալ ժողովածուներում պահպանուել են լվովահայ մի քանի վաճառականների անուններ (Պաչերես Տոլմաչ, Պետրոս Բուդա, Ամիր), որոնք ԺԴ. դ. 80ական թուերին աշխոյժ առեւտուր էին անում Տորունի վաճառականների հետ⁵⁷:

Ժէ. դ. հիմնուած հայոց գաղութներից Բարոնչը համեմատաբար առատ տեղեկութիւններ է տալիս Բրոդիի, Զոլոչովի, Լիսեցի, Ժըվանցի ու Բերեժանիի մասին:

Բրոդիի հայ գաղութը թէեւ երկար չի տեւել, բայց ինչպէս ուկրաինացի պատմաբան Եա. Մելնիչուկն է նշում, ԺԶ-Ժը դ. քիչ դեր չի խաղացել «Արեւմտեան Ուկրաինայի հողերի քաղաքական ու տնտեսական կեանքում»⁵⁸: Ինչպէս հայոց գաղթավայրերի մեծ մասի, այնպէս էլ Բրոդիի մասին եւս լեւզ պատմագիտութեան մէջ առաջին ընդարձակ տեղեկութիւնները Բարոնչն է յայտնել: «Լեհաստանի նշանաւոր հայոց վարքը» աշխատութեան մէջ նա նշում է որ 1865 թ. Անտոնի Աքենտովիչը Բրոդիի հայոց վոյթն էր, իսկ բրոդցի Տըսկեր Վարդերեսովիչը 1659 թ. Եան Կագիմիր թագաւորի պալատականը (Ժըվոտը, էջ 56, 352): «Առեւտրական ազատ քաղաք Բրոդին» աշխատութեան մէջ նա Բրոդիի հայոց գաղութի հաւաստի գոյութիւնը ընդունում է 1641 թուականից՝ հիմնուելով լեհ զօրավար, հեթման Ստ. Կոնիեցպոլսկուն (1594-1646) ուղղուած լեհ իմաստասէր եւ

57. Pomniki dziejowe Lwowa, t. 1, najstarsza księga miejska 1382-1389, Wydal Al. Czołowiecki Lwow, 1892, dokument N. 397, 512:

58. Я. Мельничук, Армянские поселения в Бродях, ԻՄԴ - 1971, էջ 250:

գրող Մ. Կոմանդարձկու 1641 թ. Յունուարի մէկի մի շնորհաւորական նամակի վրայ: Այս նամակում նշուած է, որ Բրոդիի հայերը իրենց ջգեղ ապրանքներով հարուստ փայլ են տալիս այդ քաղաքին⁵⁹: Նոյն էջի տողատակի ծանօթութեան մէջ, յղելով համապատասխան փաստաթուղթը, պատմաբանը գրում է որ հեթման Կոնիեցպոլսկու քերթուածների մէջ եւս խօսք կայ բրոդցի հայերի մասին, իսկ յղեալ գրքի 24րդ էջում, համապատասխան դիւանական նիւթերի վրայ հիմնուելով գրում է, որ բրոդցի հայ վաճառական Լուկաշ Մարտիրոսը, 1642 թ. ապրանքներ գնած – Բրոդի վերադառնալիս, սպանում է աւագակների ձեռքով: Ժէ. դ. առաջին կէսին Բրոդիում հայոց գաղութ լինելու օգտին նա բերում է եւս մի վաւերական կոտւան. Եազլովցի քաղաքապետարանի 1652 թ. վճռագրերը յիշատակում են, որ Եազլովցի Հաջիեւիչները բրոդցի հայ վաճառական Ասլան Ամիրովիչին 1500 տալեր փող են պարտք եղել⁶⁰: Հեթման Կոնիեցպոլսկու ժամանակներից Բրոդիում հայոց գաղթօջախ լինելու Բարոնչի բերած տուեալները լրացնում է ուկրաինացի գիտնական Ի. Սազինսկին, որը գաղութի վերաբերեալ Բարոնչի նշած հնագոյն յիշատակութիւնը երեք տարով ետ է տանում: Համապատասխան վաւերագիրը յղելով, նա գրում է, որ Ստ. Կոնիեցպոլսկին 1638 թ. իր հովանաւորութեան տակ է վերցրած եղել բրոդցի հայեր Մարկ Սերգիյովիչին եւ Նիկոլայ Զախար Մարկեւիչներին⁶¹: Բրոդիի հայոց գաղութի սկզբնաւորումը Ժէ. դ. առաջին կէսին են դնում գաղթավայրին անդրադարձած մասնագէտների ճնշող մեծամասնութիւնը (Վ. Պլոշչանսկի, Վ. Գրաբովցկի, Պ. Պիրոժնիկոյ, Եար. Դաշկեւիչ, Եա. Մելնիչուկ եւ այլք):

Յղելով Լվովի հայոց եկեղեցու վճռագրերը եւ լեհ պատմաբան Օստրորոգին, Բարոնչը Զոլոչեւի հայոց գաղութի հիմնարկութիւնը վերագրում է Եազլովցի հայերին, որոնք 1676 թ. յետոյ եկան այստեղ, հինմեցին փայտաշէն եկեղեցի եւ շարունակեցին զբաղուել առեւտրով (Ռըս ջեյուվ, էջ 178): Լ. Սարեւիչովան գաղութի սկզբնաւորումը դնում է Ժէ. դարավերջին՝ ի նկատի ունենալով հայերին Զոլոչեւ հրաւիրելու մասին Եան Սոբեսկու 1688 թ. հրովարտակը⁶²: Լեհ պատմաբան Բ. Սոկալս-

59. S. BARACZ, *Wolne miasto handlowy Brody*, Lwow, 1865, էջ 23:

60. Անդ., էջ 47, թիւ 74 ծանօթագրութիւնը:

61. Я. Мельничук, Армянские поселения в Бродях, ԻՍԴ – 1971, էջ 252:

62. Մ. ՅՈՎԼԱՆՆԻՍԵԱՆ, Ուրուագծեր Լեհաստանի եւ Արեւմտեան Ուկրաինի-մայի հայկական գաղթավայրերի պատմութեան, Երեւան, 1977, էջ 3:

կին, վկայակոչելով այն տեղեկությունը, թէ Լեհաստանի թագաւոր Սիգիզմունդ Աւգուստը 1530ական թուականներին այդ քաղաքի իշխան Լուկաշ Գուրկային դրամական միջոցներ է յատկացրել տեղում հայոց եկեղեցի կառուցելու համար, Ձուլոչովի հայոց գաղութի հիմնարկութիւնը վերագրում է Եաղովեցի հայերին, որոնք 1676 թ. յետոյ եկան այստեղ, հիմնեցին փայտաշէն եկեղեցի եւ շարունակեցին զբաղուել առեւտրով (Ռըս ջեյուվ, էջ 178): Լ. Սարեւիչովան գաղութի սկզբնաւորումը դնում է ժէ. դ. վերջին՝ ի նկատի ունենալով հայերին Ձուլոչեւ հրաւիրելու մասին Եան Սոքեսկու 1688 թ. հրովարտակը: Լեհ պատմաբան Բ. Սոկալսկին, վկայակոչելով այն տեղեկութիւնը, թէ Լեհաստանի թագաւոր Սիգիզմունդ Աւգուստը 1530ական թուականներին այդ քաղաքի իշխան Լուկաշ Գուրկային դրամական միջոցներ է յատկացրել՝ տեղում հայոց եկեղեցի կառուցելու համար, Ձուլոչեւի հայոց գաղութի սկզբնաւորումը դնում է ժ. դարի 30ական թուականները⁶³:

Բարոնչը ժէ. դ. հիմնուած գաղթավայրերից է համարում նաեւ Լիսեցը, թէեւ չի ժխտում այստեղ աւելի վաղ ժամանակներում հայերի բնակութեան հնարաւորութիւնը: Գաղութի մասին Բարոնչին յայտնի հնագոյն յիշատակութիւնը վերաբերում է 1692 թ.: Այդ թուին Լիսեցի հայ վաճառականները ապրանքներ են արտահանել Լվով: Պ. Պիրոժենկոն, հիմնուելով Լվովի կեդրոնական պատմական դիւանի վաւերանիւթերի վրայ, գրում է, որ 1669 թ. Լիսեցում հայոց եկեղեցի կար⁶⁴: Ըստ Բարոնչի, հայերի թիւը այս գաղութում 1782 թ. 250 էր, իսկ 1808ին՝ 300 (Ռըս ջեյուվ, էջ 156): Ստ. Ագոնցը ժէ. դարավերջին նշում է որ քաղաքի 1390 բնակիչներից 340 շունչը հայ են, 150ը լեհ, 500ը ռուսէն, 400ը չրեայ⁶⁵: Լիսեցի ժէ. դ. գաղութ են համարում նաեւ Լ. Կորվինը, Մ. Ջակոբսկա-Դուբասովան եւ ուրիշներ:

Բէրէժանիի հայ բնակչութեան մասին ամենավաղ տեղեկութիւնը Բարոնչին յայտնի է 1686 թ.: Լվովի քաղաքապետարանի դիւանում եղել է Բէրէժանիի հայոց քաղաքային վարչութեան վոյթ Դաւիթ Ամիրովիչի 1686 թ. մի գրութիւնը, որտեղ նշուած է եղել, թէ Բէրէժանիի ու Լվովի հայ վաճառականների վրայ Եասսիի մօտ աւազակներ են յարձակուել, մէկին սպանել են,

63. В. Григорян, История армянских колоний Украины и Польши, Ереван, 1980, էջ 118:

64. П. Пироженко, Материалы ЦГИА во Львове по истории армянских колоний на Украине, ԻՍՊ - 1961, էջ 249:

65. ՍՏ. ԱԳՈՆՑ, նշ. աշխ., էջ 141:

միևսներին գերել: Փաստաթղթում նշուած է նաեւ, որ Հայերը այստեղ 200 տուն ունէին եւ մի փայտաշէն եկեղեցի (Ռըս ջեյոլ, էջ 77): Քաղաքում 1686 թ. 200 Հայ ընտանիք լինելու օգտին է խօսում Մ. Բժշկեանի մի տուեալը⁶⁶, ըստ որի Հայերն այնտեղ մի ժամանակ 200 տուն էին, իսկ այժմ (1820 թ.: Ռ. Հ.), 60 տուն: Ստ. Ռոշքան ժէ. դարավերջին Բէրէժանիի մասին գրում է. «... Բնակին յազգէ մերմէ իբրեւ 120 գերդաստանի (մօտ 600 շունչ): Ռ. Հ.) եւ առաւել, որք ունին անդ եւ եկեղեցի եւ քահանայս»⁶⁷: Հետաքրքիր է ուկրայինացի գիտնական Դ. Մըշկոյի տեսակէտը: Նա, ցաւօք առանց աղբիւրը նշելու գրում է, թէ Հայերը առաջին անգամ մուտք են գործել Բէրէժանի ժԴ. դարավերջին եւ որ նրանց մասին գրաւոր առաջին յիշատակութիւնը վերաբերում է ժՆ. դարասկզբին, իսկ արդէն 1530 թ. նրանք այստեղ սեփական վոյթ ունէին⁶⁸: Եւր. Դաշկելիչը, Վ. Գրիգորեանը, Մ. Զակեւսկա-Դուբասովան եւ այլք Բէրէժանիի Հայոց գաղութի սկզբնաւորումը դնում են ժէ. դարակէսին: Բարոնչի տուեալներով Հայերն այստեղ 1764 թ. քարաշէն եկեղեցի են կառուցում, հիմնում են դրամատուն-լումբարդ⁶⁹, բայց ժԸ. դարակէսին գաղութը սկսում է քայքայուել: 1738 թ. այստեղ 177 Հոգի Հայ կար, իսկ 1860ական թթ. կէսերին՝ 100ի չէր հասնում (Ռըս ջեյոլ, էջ 79-80): Ա. Ալթունեանը 1876 թ. Բէրէժանիում 30 տուն Հայ է հաշուել⁷⁰:

ԺԸ. դ. գաղութներին Բարոնչը Համեմատաբար Հարուստ նիւթեր է տրամադրում Չէրնովցիի, Մոզլիւե-Պոդոլսկի եւ Կուտիրի մասին:

«Թէեւ Բուքովինայի մայրաքաղաք Չէրնովցին Լեհաստանին չի պատկանել - գրում է Բարոնչը - բայց դնում ենք այստեղ (գրքում: Ռ. Հ.), որովհետեւ մինչեւ այժմ Չէրնովցին գտնւում է Լվովի Հայոց արքեպիսկոպոսի իրաւադրութեան տակ (իւրիս-դիկցիա) տակ: Գրիգոր Այվազի որդիներ Ներսէսը, Ստեփանը եւ Նիկողայը Մուլաւիայից եկան Չէրնովցի, ուր հիմնելով առեւտուր, կառուցեցին շատ տներ... Նրանց ետեւից բազմաթիւ Հայեր եկան եւ արդէն 1820 թ. նրանք այստեղ 30 տուն էին

66. Մ. ԲժՇԿԵԱՆ, Համապարհորդութիւն ի Լեհաստան..., էջ 124:

67. ՍՏ. ԳԻԻՎԷՐ ԱԳՈՆՑ, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն երկրորդ, Հտ. Բ., էջ 141:

68. Д. Мышко, Жизнь армян в Подолии, ԻՍԴ - 1971, էջ 189:

69. S. BARACZ, Zywoty S. Stefanowicza, Dodadek tygodniowy przy Gazecie Lwowskiej, 1859, Թիւ 32, էջ 138. տե՛ս նաեւ՝ Ռըս, էջ 78:

70. Ա. ԱԼԹՈՒՆԵԱՆ, Տեղեկագրութիւն հայոց գաղթականութեան, Ֆոքշան, 1877, էջ 133-134:

(Ռըս ջեյուվ, էջ 81): Բարոնչի տեղեկությունը հաստատում է Բժշկեանի ստոյգ տուեալով, ըստ որի, 1820 թ. այստեղ 30 տուն հայ էր բնակում⁷¹: «Լեհաստանի նշանաւոր հայոց վարքը» աշխատութեան մէջ լեհահայ պատմաբանը գրում է որ Այվազի որդիները Ձէրնովցի են մտել ԺԸ. դ. 70-80ական թթ. եւ 1789 թ. աւստրիական կայսեր թոյլտուութեամբ Բուքովինայում կալուածներ են գնել՝ յետագայում աւելի ընդարձակելով այդ կալուածները թէ՛ Գալիցիայի, թէ՛ Բուքովինայի հողերում (Ժըվոտը, էջ 7): 1833 թ. Ձէրնովցիի հայերը Լվովի հայոց արքեպիսկոպոսին ինդրում են, որպէսզի նա քաղաքի ու շրջակայ գիւղերի հայ բնակչութեան համար հայ քահանայ առանձնացնի: Արքեպիսկոպոսը աւստրիական կայսեր թուրտուութեամբ 1840 թ. այստեղ հիմնում է Լվովի հայոց թեմի նոր վիճակ, որը սպասարկում էր 600 հայերի⁷²: Հայոց եկեղեցի հիմնելու ծախսերը հոգալու համար կազմւում է մի հանգանարկու յանձնախումբ, որը հայերէն, լեհերէն եւ ֆրանսերէն լեզուներով մի կոչ է տարածում ժողովրդի մէջ՝ յորդորելով միջոցներ չինսխել հայոց եկեղեցու հիմնարկութեան համար, որը «պէտք է դառնայ հայերի ազգային, ընտանեկան ու կրօնական համախմբման կէտ»⁷³:

Մոգիլիով-Պոդոլսկի հայոց գաղութի սկիզբը Բարոնչը համարում է 1742 թ. հայոց Ս. Գրիգոր եկեղեցու շինութիւնը եւ 1743 թ. Ֆր. Պոտոցկու արտօնագիրը հայերին՝ ինքնավարութեան մարմին ստեղծելու, սեփական վոյթի գլխաւորութեամբ առանձին դատարան ունենալու, առեւտրով ու արհեստներով ազատօրէն զբաղուելու մասին (Ռըս ջեյուվ, էջ 156-158): Հիմնուելով Մ. Բժշկեանի վրայ, Բարոնչը գրում է, որ 1820 թ. այստեղ 60 տուն հայ կար, որոնք առեւտրական կապերի մէջ էին Արեւմտեան Եւրոպայի երկրների, Բրոդիի, Լիտուայի եւ նոյնիսկ Ստամբուլի հետ (Ռըս ջեյուվ, էջ 162):

Հայահիմն Կուտի քաղաքը լեհահայ այն եզակի գաղութներից էր, որտեղ հայերը իրենց բարբառը, սովորութիւններն ու ազգութիւնը պահպանել էին մինչեւ 1980ական թուականները: Կուտիի մասին Մ. Բժշկեանը գրում է. «Յառաջագոյն անտառամուկ էր, ապա 20 տունը Հայոց եկին անդ հրաւիրմամբ Օգոստոսի թագաւորին լեհաց (Աւգուստ Բ.ի մասին է խօսքը: Ռ. Հ.), որ ետ նոցա պարգեւագիր արտօնութեանց ի 1715 Յուլիս 18

71. Մ. ԲԺՇԿԵԱՆ, Ճամապարհորդութիւն ի Լեհաստան..., էջ 189:

72. Ս. ԲԱՐՈՆՁ, Ռըս ջեյուվ օրմիամսկիս, էջ 81-82:

73. Ռըս ջեյուվ, էջ 82-83:

զոր եւ տեսաք: Որով սկսան Հայք շինել զայս քաղաք եւ առաջին հիմնարկողն եղեւ Շատպէյ Հայ վաճառական, որ ելն ի Մոլտովիոյ»⁷⁴:

Գրեթէ նոյնն է հաղորդում նաեւ Ստ. Ազոնցը, որը նոյն արտօնագիրը կարդացել էր 1791 թուին⁷⁵: Բարոնչը նոյնպէս նշում է որ քաղաքի հիմնադիրը մոլդաւահայ վաճառական Շատպէյն էր, բայց չի նշում, որ հայերը 20 ընտանիքով եկան այստեղ, իսկ նրանց տրուած 1715 թ. արտօնագրի հեղինակին համարում է իշխան Նուզ. Պոտոցկուն⁷⁶: Լեհահայ բանասէր Մ. Մոյզէսովիչը, հիմնուելով Բարոնչի տեղեկութեան վրայ, 1715 թ. հայերին տրուած արտօնագրի հեղինակը Պոտոցկուն է համարում⁷⁷: Քանի որ Բարոնչը իր այս պնդումը չի ամրագրում որեւէ փաստաթղթի յիշատակումով, ուստի հիմք ենք ընդունում Ստ. Ազոնցի ու Մ. Բժշկեանի տեղեկութիւնները, քանի որ նրանք աչքի են անցկացրել կուտեցիներին տուած Աւգուստ Բ.ի 1715 թ. արտօնագիրը: Սակայն Բարոնչը մէջբերում է Աւգուստ Գ.ի 1756 թ. Յուլիսի 10ի արտօնագիրը, որով բազմաթիւ արտօնութիւններից բացի, կուտեցի հայերին թոյլատրւում էր եկեղեցի կառուցել (Ռըս ջեյուվ, էջ 100-101): Ուկրայինացի գիտնական Վ. Գրաբովեցկին 1715 թ. արտօնագրի մասին ոչինչ չի հաղորդում, միայն նշում է որ հայերն այստեղ բնակւում են 1715 թուից՝ առանց շեշտելու, որ քաղաքը հէնց այդ թուին հիմնել են հայերը⁷⁸: Ցաւօք օտար հեղինակների այս խոտելի սկզբունքը զալիս է հնուց, փոխանցւում է սերնդէ-սերունդ եւ ուղղուած է հայաշատ բոլոր քաղաքների հիմնարկութեան մէջ հայերի դերի նուազեցմանը:

Կուտիի հայերի թիւը մօտ 1787 թ. Բարոնչը նշում է 396 հոգի, իսկ 1765 թ.՝ 70 տուն, 1808 թ.՝ 804 շունչ՝ շեշտելով, որ խօսւում են հայերէն (Ռըս ջեյուվ, էջ 102-104): Լվովցի գիտնական Պ. Սիրեշուկը, յղելով Լվովի կեդրոնական պետական դիւանի վճռագրերը, գրում է որ 1765 թ. Կուտիում 70 հայ ընտանիք կար⁷⁹: Մ. Բալինսկին, Տ. Լիպինսկին եւ Նուզ. Ցելե-

74. Մ. ԲժՇԿԵԱՆ, նշ. աշխ., էջ 127:

75. ՍՏ. ԱԳՈՆՑ, Աշխարհագրութիւն չորից..., էջ 142:

76. Ս. ԲԱՐՈՆՉ, Ռըս ջեյուվ, էջ 100:

77. M. MOJZESOWICZ, *O Ormianach w Kutach, Poslaniec Sw. Grzegorza*, N. 1, Lwow, 1927, էջ 6:

78. В. Грабовецкий, Армянские поселения в Кутах, *ԻՍՂ* – 1971, էջ 255:

79. П. Сиреджук, Розселение и численность армян в Галицком Прикарпатие в XVII-XVIII вв., Պատմաքաղաքագիտական համագումար, 1974, թիւ 1, Երեւան, էջ 139:

ւիշը 1739 թ. այստեղ 50 տուն հայ են նշում, իսկ 1884 թ.՝ չըջակայ բնակչութեան հետ միասին՝ 1800 հոգի⁸⁰: 1791 թ. Ստ. Ազոնցն այստեղ 125 տուն հայ է հաշուել, աւելի քան 760 շունչ⁸¹: Մ. Բժշկեանը 1820 թ. Կոտորում 3000 հայ բնակչութիւն է հաշուում⁸², Զ. Լեխիցկու տուեալներով⁸³ կուտեցի լեհահայ երաժշտագէտ եւ բանասէր Զբիգնեւ Կոսցիոնկը նշում է, որ 1983 թ. այս գիւղում 25 հայ ընտանիք էր բնակւում⁸⁴:

Տըսմենիցի մասին Բարոնչը գրում է, որ մօտ 1540 թ. քաղաքի հայ վաճառականների շնորհիւ այս քաղաքը ծաղկում է ապրել (Ռուս ջեյուվ, էջ 172): Այսինքն՝ պատմաբանը տեղի հայոց գաղութի սկզբնաւորումը դնում է ԺԶ. դ. առաջին կէսը: Նոյն կարծիքին են նաեւ Վլ. Լոզինսկին, Մ. Զակեւսկա-Պուբասովան եւ ուրիշներ⁸⁵: Դ. Մըշկոն, առանց որեւէ աղբիւր յղելու, գաղութի սկիզբը համարում է ԺԵ. դարի սկիզբը⁸⁶: «Յիշատակարան Լեհաստանի պատմութեան» գրքում Բարոնչը գրում է որ քաղաքի տնտեսական նշանակութիւնը բարձրացնելու նպատակով Դոմինիկ Պոտոցկին Կամենեց-Պոդոլսկը լքած հայերին 1679 թ. հրաւիրեց Տըսմենից, նրանց ազատեց բերդաքաղաքի բնակչութիւնից զանձուող բոլոր տեսակի հարկերից եւ տուեց «Լեհաստանի քաղաքների ազատներին հաւասար իրաւունքներ»⁸⁷: Հետաքրքիր է նաեւ 1730ական թթ. Տըսնեմիցի հայոց եկեղեցուն կից հայկական դպրոց լինելու մասին Բարոնչի վկայութիւնը⁸⁸, որը լեհահայ դպրոցի պատմութեան սուղ տուեալները լրացնող կարեւոր փաստ է:

Քաղաքի հայ բնակչութեան քանակը Բարոնչը չի նշում, բայց կարծում է ԺԼ. դարասկզբին բաւական քանակութեան հայութիւն կար: Շեշտելով, որ 1713 թ. քաղաքի Գրիգոր Ամիրովիչ հայ քահանան ծխամատեանները սկսեց հայերէն լրացնել՝ շարունակում է. «Այդ ժամանակ պէտք է որ քաղաքը բաւական հայաշատ լինէր, քանի որ կէս տարուայ մէջ 30 կնուկ է գրանցուել» (Ռուս ջեյուվ, էջ 172): ԺԼ. դարավերջի եւ ԺԹ. դարա-

80. В. Грабовецкий, Армянские поселения в Кутах, *ԻՍԴ* - 1971, էջ 255:

81. ՍՏ. ԱԳՈՆՑ, Աշխարհագրութիւն..., մասն երկրորդ, հտ. Բ., էջ 143:

82. Մ. ԲժՇԿԵԱՆ, Ճամապարհորդութիւն ի Լեհաստան..., էջ 127:

83. CZ. LECHICKI, Kosciol Ormianski w Polsce, Lwow, 1929, էջ 155:

84. ZB. KOSCIOW, Miadomosc o Ormianach Kuckich, Warszawa, 1989, էջ 4:

85. M. ZAKRZEWSKA-DUBASOWA, Ormianie w dawnej Polsce, էջ 22: «Հայ-րեմի», 1929, թիւ 5, էջ 82:

86. Д. МЫШКО, Жизнь армян в Подолии, *ԻՍԴ* - 1971, էջ 191:

87. S. BARACZ, Pamietniki drzejow Polskich, Lwow, 1855, էջ 234-235:

88. ԱՆԷ, էջ 240:

սկզբին Տըսմենից այցելած հայ հեղինակները ճշգրիտ տուեալներ են թողել քաղաքի այդ ժամանակուայ հայ բնակչութեան քանակի մասին: Ստ. Ագոնցը գրում է, որ հայերն այստեղ 380 տուն էին. «Որք ունին քարաշէն եկեղեցի վայելուէ շինեալ ի 1750»⁸⁹: Մ. Բժշկեանը 1820 թ. 50 հայ ընտանիք է հաշուել քաղաքում, որոնք յստակ խօսում էին հայերէն, քանի որ «ի յետին ժամանակս եկին աստ, որպէս պատմեցին մեզ, թէ 170 ամօք յառաջ 42 տունք հայոց եկին ի Կամենիցէ եւ բնակեցին աստ»⁹⁰: Փաստորէն Մ. Բժշկեանին բանաւոր յիշողութեամբ պատմածը համընկնում է իրականութեանը: Մենք վերը դիւանական փաստաթղթերից Բարոնչից բերած յիշատակութիւնից տեղեկացանք, որ հայերը Կամենեցից այստեղ են գաղթել 1679 թ.: Մ. Բժշկեանը ճշտում է այդ թուին Տըսմենից գաղթած հայ ընտանիքների թիւը՝ 42 տուն: Բարոնչը տեղեկացնում է, որ իր ապրած ժամանակներում (1866 թ.), Տըսմենիցում եւ շրջակայ 23 գիւղերում ապրում էր ընդամէնը 200 հայ (Ռըս ջեյուվ, էջ 175): Ստ. Ագոնցը ԺԼ. դարավերջին այստեղ ընդամէնը 1280 բնակիչ է հաշուել, որոնցից 300ը լեհ, 600ը ուկրայինացի, 380ը հայ⁹¹: Ա. Ալթունեանը 1876 թ. այստեղ 26 տուն հայ է տեսել⁹²:

Լիտուայի հայոց գաղթավայրերի պատմութիւնը պատմագիտութեան չուսումնասիրուած խնդիրներից է: Բարոնչը թէեւ Վիլնիւսից բացի լիտվական ոչ մի այլ քաղաքի հայութեան մասին որոշակի տուեալ չի հաղորդում, բայց այն կարծիքն է, որ հայերն այստեղ են մտել մօտ ԺԴ. դարավերջին: Հիմնուելով Տ. Կրուսինսկու եւ գերմանալեզու պատմաբանների աշխատութիւնների վրայ, Բարոնչը նշում է, որ Լանկ Թիմուրի արշաւանքների հետեւանքով Հայաստանից զինեալ ասպետները «սրով իրենց ճամբան հարթեցին» դէպի Լեհաստան եւ ծառայութեան մտան նաեւ Լիտուայի մեծ իշխան Վիտուդի* (1401-1430) մօտ, իսկ 1410 թ. հերոսացան Գրիւնվալդի ճակատամարտին (Ռըս ջեյուվ, էջ 62-63): Դիւանական փաստաթղթերի վրայ հիմնուելով, նա մի այլ առիթով գրում է, որ 1464 թ. լիտվայի, Ուկրայինայի, Պոդոլիայի, Վալաքիայի բոլոր դոմինիկեանները,

89. ՍՏ. ԱԳՈՆՑ, Աշխարհագրութիւն... մասն երկրորդ, հտ. Բ., էջ 141:

90. Մ. ԲԺՇԿԵԱՆ, Ճամապարհորդութիւն ի Լեհաստան..., էջ 124-1125:

91. ՍՏ. ԱԳՈՆՑ, նշ. աշխ., էջ 141:

92. Ա. ԱԼԹՈՒՆԵԱՆ, Տեղեկագրութիւն հայոց գաղթականութեան, Ճորջան, 1877, էջ 134:

* Վիտուդը լիտուական զօրքերով լեհական Վալդիսլաւ Նաքելլո թագաւորի հետ ղեկավարում էր Գրիւնվալդի ճակատամարտը:

որոնց թուում նաեւ Հայ դոմինիկեանները, ենթարկւում էին այդ ուխտի զենեւալին⁹³: Այս առումով շահեկան են Բարոնչի այն բազմաթիւ փաստերը, որոնք ցոյց են տալիս, որ Լիտուայի, Կամենեց Պոդոլսկի, Գդանսկի եւ Լեհաստանի այլ քաղաքների Հայ վաճառականութիւնը նշանակալի առեւտուր էր ծաւալել նաեւ Լիտուայում (Ռըս Ջեյուվ, էջ 110, 162, 165-166): Լիտուայում Հայերի ծաւալած աշխոյժ առեւտրի օգտին է խօսում նաեւ Լվովի քաղաքապետարանի մի դիմում-բողոքը Սիգիզմունդ Գ-ին (1587-1632), որտեղ կաթոլիկները տրտնջում են որ Հայերը ոչ միայն արեւելեան առեւտրով են զբաղւում, այլ նաեւ մեծ չափերի առեւտուր են անում Եւրոպայում եւ Լիտուայում⁹⁴: Վերջապէս Լիտուայում Հայոց գաղթավայրեր լինելու մասին բաւական պերճախօս կռուան կարելի է դիտել դիւանական փաստաթղթերից Բարոնչի քաղած այն տեղեկութիւնը, թէ 1579 թ. Վիլնիւսի բնակիչ Մուրադ Կերիմովիչը քաղաքի նշանաւոր վաճառականներից էր (Ժըվոտը, էջ 176): Վիլնիւսում ԺՁ. դ. 70ական թթ. Հայերի բնակութեան մասին Լվովի քաղաքապետ վճռագրերից քաղած հաւաստի տուեալ է բերում նաեւ Թ. Գրոմ-նիցկին, ըստ որի այդ քաղաքում 1578 թ. բնակւում էր Լվովից եկած ոմն Գրիգոր Հայ⁹⁵: Ի նկատի ունենալով իր հաւաքած փաստերը, Բարոնչը եզրակացնում եւ պնդում է որ Լիտուայում Հայկական գաղթավայրերի գոյութիւնը կասկած չի յարուցում «թէեւ նրանք ոչ մի տեղ եկեղեցի չեն ունեցել» (Ռըս Ջեյուվ, էջ 176)ի տողատակի ծանօթութիւն): Լիտուայում Հայկական գաղթ-օջախներ լինելու մասին Բարոնչի, Բիշոֆֆի եւ Գրոմնիցկու տեղեկութիւնները հարստացնող լրացումներ կան Ստ. Ռոշքայի, Ֆր. Ջախարիասեւիչի, Ա. Ռոյլէի, Լ. Տէնդերովիչի, Լ. Կոր-վինի եւ այլով աշխատութիւններում: Ի յաւելումն Լիտուա մտած Հայ ասպետների մասին Կրուսինսկուց քաղած տեղեկութիւնների, Ջախարիասեւիչը յղում է Լվովի Հայոց եկեղեցու դիւանում իր տեսած 1401 թ. մի փաստաթուղթ, ուր նշուած է եղել, թէ Վալաքիայի իշխան Ալեքսանդրից Սերէթ քաղաքի Հայոց թեմակալ հաստատուած ոմն Յովհաննէս եպիսկոպոս, Պոլսի Հայոց պատրիարք Անտոնին գրել է, որ ինքը իր եպիսկոպոսական իշխանութիւնը Լիտուայի մեծ իշխան Վիտովտից (1401-1430) է ստացել. բացի այս՝ Ջախարիասեւիչը Հայերի մուտքը

93. S. BARACZ, *Rys dziejow zakonu kaznodziejskiego w Polsce*, t. 1, Lwow, 1861, էջ 205-206:

94. ՖԻՐԴ. ԲԻՇՈՖՖԻ, Լեհահայոց հիմ իրաւունքը, Վիեննա, 1890, էջ 36-37:

95. T. GROMNICKI, *Ormianie w Polsce*, Encyklopedia koscielna, t. 17, էջ 447:

Լիտուա դնում է Վիտուդի ժամանակներից, ապա վկայում, որ Շուգ. Եպիֆան Մինասովիչի «Լեհահայ նախնականությունների վարքը քառականերով շարադրեալ» լատիներէն գրքում կարդացել է ԺԴ. դ. Վիլնիւսում ապրած անանուն մի հայ եպիկոպոսի մասին քառեակ⁹⁶: Ստ. Ռոշեայի «Ժամանակագրութեան» մէջ նշուած է, որ 1200 թ. Կիւեւում հայեր էին ապրում, որտեղից նրանք յետագայում անցան Լիտուա, ուր «մինչեւ այսօր (1732 թ. Ռ. Հ.) բնակւում են հայ ազնուական Նուրիջան եւ Գրիգորովիչ տոհմերը»⁹⁷: Ա. Ռոլլէն Կամենեց-Պոդոլսկի նշանաւոր Սոլթան (Չոլթան, Սոլթան) հայկական տոհմի մասին գրում է, որ սրանք Կիւեւ մտած հայ խաչակիր ասպետների զարմից են, որոնց մի ճիւղը «մտաւ Լիտուա եւ այնտեղ սկզբնաւորեց այդ ազգանունով բաւական մեծ գերդաստան»⁹⁸: Ղ. Ինճիճեանը կարծում է որ հայերը 1183 թ. եկեղեցի են կառուցել նաեւ Լիտուայում⁹⁹: Լ. Տէշդորովիչը հայ ազնուական տոհմերին նուիրած իր գրքոյկում, օգտուելով Բ. Պոպրոցկու աշխատութիւններից, նոյն Սոլթանների մասին գրում է, թէ սրանց մի ճիւղը 1584 թ. ապրում էր Լիտուա¹⁰⁰: Լ. Կորվինը եւս իր նշանաւոր աշխատութեան մէջ Սոլթաններին եւ նրանցից սերուած Աբգարովիչների ու Զախարիասելիչների մասին նշում է, որ սրանք ԺԵ. դ. են հիմնուել Լիտուա¹⁰¹: Նոյն աշխատութեան մէջ, հիմնուելով լեհ տոհմագէտ-պատմաբաններ Ա. Բոնիեցկու, Հիպ. Ստոպնիցկու եւ այլոց աշխատութիւնների վրայ, Կորվինը լեհահայ գերդաստաններ Բալեւիչների եւ Միկոլաեւիչների մասին գրում է, որ Լիտուայից են սերում¹⁰², որոնք Լիտուայում բնակւում էին ԺԶ. դարից: Ստ. Ագոնցը օտար պատմաբաններից քաղած տուեալների վրայ հիմնուելով գրում է որ 1062 թ. Կիւեւ մտած ասպետների մի մասը ծառայութեան մտան լիտուական իշխանների մօտ, նրանցից ստացան մեծամեծ կալուածքներ, որոնք ժառանգեցին նրանց յաջորդ Մալախովսկիները (յետագայում իրենց

96. FR. ZACHARYJASEWICZ, *Wiadomosc o Ormianach w Polsce*, էջ 15-16, 36:

97. Ս. ՌՈՇԷԱՅ, Ժամանակագրութիւն, էջ 127:

98. DR. ANTONI J., *Nowe opowiadania historyczne*, Բ. հրատ., Lwow, 1883, էջ 167-168:

99. Ղ. ԻՆՃԻՃԵԱՆ, Հնախօսութիւն Հայաստանայց, հտ. Ա., Վենետիկ, 1835, էջ 343:

100. L. THEODOROWICZ, *Nieco o heraldyce i rodach Ormian Polskich*, Lwow, 1925, էջ 15:

101. L. KORWIN, *Ormianskie rody szlacheckie*, էջ 154:

102. Անդ, էջ 70, 126:

ազգանունը դարձրին Մալխասովսկի), Սապիեխանները, Գրիգորովիչները, Նուրիջանները եւ ուրիշներ¹⁰³:

Վերոյիշեալ փաստերը բաւարար են պնդելու համար, որ Լիտուայի հայոց գաղթավայրերի սկզբնաւորումը առնուազն ԺԳ-ԺԴ. դարերի իրողութիւն է:

Այսպիսով՝ Ս. Բարոնչը Ռեչ-Պոսպոլիտայի եւ Լիտուայի հայոց գաղթավայրերի սկզբնաւորման հարցը քննելիս՝ հիմնականում ճիշտ է որոշել գաղթականութեան փուլերը, ինչպէս նաեւ գաղթավայրերի մեծ մասի սկզբնաւորման ժամանակը՝ աղբիւրների հանդէպ ցուցաբերելով ծայր աստիճանի զգուշութիւն եւ դրանց բծախնդիր ընտրութիւն: Բայց ձեռքի տակ չունենալով իրենից յետոյ հրատարակուած աղբիւրագիտական ժողովածոների ու պատմագիտական հետազոտութիւնների տուեալները, հասկանալի պատճառով առանձին գաղութների սկզբնաւորման հարցում (Լուցկ, Լվով, Կամենեց-Պոդոլսկ, Նազլովեց, Սնեատին), սխալներ է թոյլ տուել՝ դրանց ձեւաւորումը մօտ մէկ հարիւրամեակ ետ բերելով արդի պատմագիտութեան մէջ ընդունելի համարուող ժամանակներից՝ թէեւ ըստ մեզ, այդ տեսակէտներն էլ են վիճելի, քանի որ շատ գաղութների սկզբնաւորումը անհիմն պատճառաբանութիւններով ետ են բերում: Մեր համոզումով, անվիճելիօրէն հայահիմն համարուող Օրմիանէ, Օրմեանկի եւ Կուտի բնակավայրերի շարքը պէտք է դասել Լվովը, Կամենեց Պոդոլսկը, Լուցքը, Նազլովեցը: Ստանիսլաւի, Ջամոստիէի հիմնադիրներից պէտք է համարել հայերին, որոնց ջանքերով այդ քաղաքները ծաղկում ապրեցին եւ դարձան ժամանակի առեւտրա-տնտեսական խոշոր կեդրոններ:

ՌԱՖԱԵԼ ԼԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

103. ՍՏ. ԱԳՈՆՑ, Աշխարհագրութիւն չորից մասամբ աշխարհի, մասն երկրորդ, հտ. Բ., էջ 95: